Ա Ս Տ Ո Ւ Ա Ծ Ա Շ Ո Ւ Ն Չ
ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ
ՊՐԱԿ--Բ

1. **Աստուածայայտնութիւն**
2. **Աղօթք**
3. **Տէրունական Աղօթք (Հայր Մեր)**
4. **Անիծուած Թզենին**

Ալպէռ Նորատունկեան

1995

ՀԱՄԵՍՏ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ ՄԵՂԵԴԻՆԵՐ
ԵՒ ԱՂՕԹՔՆԵՐ

«Քեզ ճանչցուցի անոնց և պիտի շարունակեմ ճանչցնել որպէսզի անոնց մէջ ըլլայ այն սէրը որով զիս սիրեցիր և ես ըլլամ անոնց մէջ»--Յիսուս

Ջ Օ Ն

Խորհրդածել ու խորհրդաբանել (contemplation) կատարն է աստուածային ներկայութեան և փոխ յարաբերութեան: Մարդ արարած կը հասնի այս բարձունքը, մի միայն աստուածային շնորհիւ՝ որպէս պարգեւ: Այս շնորհը կրնայ տրուիլ և կրնայ ետ առնուիլ:

Աստուածաշունչի այս համեստ սերտողութիւնները խորհրդածութեան նիւթ եղած է Թորոնթոյի Սուրբ Երրորդութիւն Եկեղեցւոյ տարեցներուն: Աստուածային առաջնորդութեամբ ներքին մղում մը զգացի, որ սոյն սերտողութիւնները փոխանակ գրուանի տակ պահուելու, սերմանուին նաեւ զանազան հաւատացեալ սրտերու մէջ:

Աղօթքս է, որ Աստուծոյ շնորհած խօսքին սերմերը ծլարձակուին ու դառնան խթանը հաւատքի խոյանքներու, մխիթարութիւն սգաւոր սրտերու ու փառաբանութիւն աստուածային պարգեւներու:

Ալպէռ Նորատունկեան
Թորոնթօ Յունուար 15, 1995

Լաւագոյն կերպով կ՛ուսուցուին վերոյիշեալ նիւթերը, երբ իւրաքանչիւրը զանազան ստորաբաժանումներով սերտուի, ո՛չ միայն մէկսերտողութեամբ։

Հաւատքը **պատմական** փորձառութիւն մը չէ, այլ հանապազօրեայ **ապրում** մըն է որ կը կարօտի սերտողութեան ու վերանորոգման։

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս պատուիրեց Իր աշակերտներուն ոչ միայն քարոզել, այլ ըսաւ Ան. «Գացէ՛ք ուրեմն, **աշակե՛րտ** դարձուցէք բոլոր ազգերը»--Մատթ.ԻԸ. 19։ Այլ խօսքով դաստիարակեցէ՛ք հաւատքը արմատացնել ու միտքը լուսաւորել։

ՏԷ՛Ր ՓՐԿԷ՛

Տէ՛ր Դո՛ւն փրկէ մարդիկն ամէն
Հարուստ ըլլան թէ չքաւոր,
Որոնք հոգւով քեզ կ՛աղօթեն,
Որ իրենց տաս սրտի անդորր։

Մեղանչողին միտքը խաւար
Մաքրազտէ Դուն մեղքերէ,
Փրկութիւն նոր տո՛ւր բաւարար,
Որ Քեզ պաշտեն ամէն րոպէ։

Բարութեանդ յորդ աղբիւրէն
Առատօրէն տո՛ւր ամէնուն
Սիրտ ամոքող յոյս, սէր նորէն,
Որ միշտ ապրին խինդով անհուն։

--**Սարգիս Պալեան**

ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ--1

1.-Քօղարկուած Գանձ մըն էի Ես, փափաքեցայ ճանչցուիլ: Ուստի ստեղծեցի տիեզերքն ու արարածները որ գիտնան և ճանչ-նան Զիս.

«Եւ ասաց Աստուած, Եղիցի լոյս. և եղեւ լոյս»:

2.-Աստուած ոչ միայն Ինքզինք բացատրեց մարդուն. այլ՝ Հաղորդակից ալ եղաւ անոր. «Հաւատարիմ է Աստուած որմէ կանչուեցաք՝ հաղորդակից ըլլալու իր Որդիին՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսին» --Ա. Կորնթ. Ա. 9 Բ. Պետ. Ա. 4:

3.-Միայն Աստուած գոյ է Իր իսկութեամբ և իրականութեամբ, բոլոր արարածները իրենց գոյութիւնը կը պարտին արարչագործութեան կամ աստուածային լոյս Բխումին. «Զոր իր ժամանակին յայտնի պիտի դարձնէ Երանելին և միակ Հզօրը, թագաւորներու Թագաւորը և տէրերու Տէրը. ան՝ որ միայն ի՛նք ունի անմահութիւնը և կը բնակի անմատչելի լոյսի մէջ՝ զոր մարդոցմէ ոչ ոք տեսած է և կարող է տեսնել. անոր պատի՛ւ և զօրութի՛ւն յաւիտեանս: Ամէն»--Ա. Տիմոթ. Ջ. 15-16:

4.-Աստուած ինքնաբացայայտման յայտնութիւն է, կարելի՞ է որ առաջին դարէն յետոյ դադրի Ինքզինք յայտնելէ. «Երբ որ գայ Ինքը՝ Ճշմարտութեան Հոգին, ամենայն ճշմարտութեամբ պիտի առաջնորդէ ձեզ. որովհետեւ ոչ թէ ինքնիրմէ պիտի խօսի, այլ ինչ որ լսէ՝ զայն պիտի խօսի. և գալիք բաներու մասին պիտի պատմէ ձեզի» --Յով. ԺՋ. 13-15:

5.-Յիսուսի շրթներուն վրայ Աստուած գերազանցապէս ու վեհափառօրէն Հայրութիւն է, որ կը զբաղի նոյնիսկ պարզ ճնճղուկներով. «Նայեցէ՛ք երկնքի թռչուններուն, որոնք ո՛չ վարուցան կ՛ընեն, ո՛չ կը հնձեն և ո՛չ ալ շտեմարաններու մէջ կը ժողվեն. բայց ձեր երկնաւոր Հայրը կը կերակրէ զանոնք. չէ՞ որ դուք աւելի էք անոնցմէ»--Մատթ. Ջ. 26:

6.-Աւելի խորապէս կարելի է երեւակայել զԱստուած, քան բացատրել Զինք, և ալ աւելի իրապէս գոյ է Ան, քան թէ կրնանք երեւակայել Զինք: «Օ՜, խորութիւն Աստուծոյ հարստութեան և իմաստութեան և գիտութեան: Որքա՜ն անքննելի են անոր դատաստանները, և անգննելի՝ անոր ճանապարհները: Արդարեւ, ո՞վ գիտցաւ Տիրոջ միտքը, կամ ո՞վ խորհրդատու եղաւ անոր, կամ ո՞վ անոր փոխ տուաւ, որ փոխարէնը առնէ անկէ. քանի որ անկէ և անով և անորն է ամէն բան: Անոր փա՜ռք յաւիտեանս: Ամէն» --Հռոմ. ԺԱ. 33-36:

7.-"Աստուած ամենուրեք է և ամէն ինչի մէջ"-Ս.Գրիգոր Նարեկացի.

«Զի դու միայն ես երկնիւմ անճառ և երկրում՝ ազնիւն, Գոյութեան տարրերի մէջ և աշխարհի բոլոր ծագերում, Սկիզբն ամէն ինչի, և ամէն ինչի մէջ՝ ամբողջ լրումով»:

8.-«Աստուա՜ծ իմ, ո՞վ ես Դուն, և ո՞վ եմ ես»

--**Փրանկիսկոս Ասիզացի:**

9.-Յիսուս Քրիստոս ոչ ուսմունք է, ոչ տեսութիւն, այլ Ան Իր **ապրումո՛վ** բացայայտեց Աստուած անհմանալին:

10.-Աստուած եղած էր ջունչ, եղած էր ձայն, եղած էր երեւում Քրիստոսով՝ Անոր Մարդեղութեամբ, Ան եղաւ Մարմին:

«Եւ Բանը մարմին եղաւ ու բնակեցաւ մեր մէջ. և մենք տեսանք անոր փառքը, որպէս շնորհով և ճշմարտութեամբ լի Միածնի փառք՝ ստացուած Հօրմէն»--Յով. Ա. 14

11.-Աստուած ինչու կը սիրէ մեղաւորները.

Ան կը սիրէ ո՛չ որովհետեւ մենք մեղաւոր ենք, այլ որովհետեւ **Աստուած Սէր է:**

«Աստուած այնպէս սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին որդին տուաւ, որպէսզի ով որ հաւատայ անոր՝ չկորսուի, այլ ընդունի յաւիտենական կեանքը»
--Յով. 3. 16:

12.-Յիսուս Քրիստոս Ճշմարիտ պատուհանն է, որ ցոյց կու տայ Աստուծոյ սրտին խորքը՝ Մարդկային Աստուածայայտնութիւն:

«Ճանչնալու համար Աստուծոյ խորհուրդը ի Քրիստոս Յիսուս, որուն մէջ պահուած են գիտութեան և իմաստութեան բոլոր գանձերը»--Կողոս. Բ.3:

13.-Աստուածային սիրոյ Բխումը խոնարհելով աշխարհ, ստեղծեց մարդը, նոյնպէս մարդկային կեանքը պարտ է դառնալ խոյանք մը դէպի արարչական Ակնաղբիւրը՝ սիրոյ, յոյսի և հաւատքի տենչով:

«Արդ, կատարեա՛լ եղէք դուք, ինչպէս որ կատարեալ է ձեր երկնաւոր Հայրը»--Մատթ. Ե.48, Եփես. Դ.13:

14.-Հին Կտակարանի մէջ աստուածայայտնութիւնը կը սկսի Մովսէսի օրէնքներով, կը զարգանայ Սաղմոսներու մէջ, կը բարձրանայ և կը յառաջդիմէ երկնաբարձ գագաթներ մարգարէութեան մէջ ու գերագոյն կատարին կը հասնի Յիսուսի Մարդեղութեամբ, Անոր ապրումով և զոհողութեամբ:

«Ճշմարիտ կ՛ըսեմ ձեզի, որ շատ մարգարէներ և արդարներ փափաքեցան տեսնել՝ ինչ որ դուք կը տեսնէք, բայց չտեսան, և լսել՝ ինչ որ դուք կը լսէք, բայց չլսեցին»--Մատթ. ԺԳ. 17, Ղուկ. Է. 26-28:

«Աստուած բազմապիսի ձեւերով և այլազան օրինակներով կանխաւ խօսեցաւ մեր հայրերուն, մարգարէներու միջոցով.այս օրերուս վախճանին, ան խօսեցաւ մեզի իր Որդիին միջոցով՝ զոր ժառանգ կարգեց ամէն բանի, և որուն միջոցով ալ ստեղծեց յաւիտեանները: Ան՝որ լոյսն է իր փառքին և նկարագիրը իր էութեան, ան՝ որ կը կրէ ամէն բան իր զօրութեան խօսքով, մեր մեղքերուն մաքրումը կատարելէ յետոյ նստաւ Մեծութեան աջ կողմը, բարձունքներու մէջ:»

«Որդիին կ՛ըսէ. Քու Աթոռդ, Աստուա՛ծ, յաւիտեանս յաւիտենից է. քու արքայութեանդ գաւազանը՝ ուղղութեան գաւազան: Դուն սիրեցիր արդարութիւնը ևատեցիր անօրէնութիւնը, ասոր համար, Աստուա՛ծ քու Աստուածդ օծեց քեզ ուրախութեան իւղով՝ աւելի քան քու ընկերներդ» --Եբր. Ա. 1-3, 8-9:

«մարգարէական խօսքը ճրագի մը պէս լոյս կու տայ մութին մէջ, մինչեւ որ օրը լուսնայ, արուսեակը ծագի ձեր սրտերուն մէջ»--Բ. Պետ. Ա. 19

Ա Ղ Օ Թ Ք

1.-Սուրբ Գրոց հայեցակէտէն, "Աղօթք"ի առանձնայատկութիւնը կը բարձրանայ կախարդութեան կամ մոգութեան աստիճանէն վեր, դէպի հոգեղէն բարձունք ուր ենթական կը յարաբերի և կը հաղորդուի աստուածային իրագործութիւններու:

2.-Աղօթքը այն փորձառութիւնն է երբ էակ մը կը յարաբերի Աստուծոյ հետ առանց միջնորդի, բահանայի կամ երկնային արարածի: Աղօթքը անձնակա՛ն շփում և հաղորդակցութիւն հաստատել է անտեսանելի և մարդկայնօրէն անհասանելի սիրավառ Գոյութեան մը հետ, որ Ա՛ն ալ Իր կարգին կը ջանայ հաղորդակցիլ մեզ հետ:

«Երբ Յիսուս ալ մկրտուած աղօթք կ՛ընէր՝ երկինքը բացուեցաւ և սուրբ Հոգին մարմնաւոր տեսքով, իբրեւ աղաւնի, իջաւ անոր վրայ. և երկինքէն ձայն մը եկաւ, որ կ՛ըսէր. "Դո՛ւն ես իմ սիրելի Որդիս, քեզի հաճեցայ» --Ղուկ. Գ. 21-22

Աղօթքը՝ աստուածային սուրբ գերիշխանութիւնը հաստատել է մեր հոգիին մէջ: Սրբազան վայրկեան մըն է, մարդկային կեանքին մէջ, երբ ան իր սիրտը կը բերէ որպէս զոհ մը Աստուծոյ:

3.-Մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս պատուիրած է մեզ աղօթել,

«Խնդրեցէ՛ք Աստուծմէ և պիտի տայ ձեզի, փնտռեցէ՛ք և գտնէք, բաղխեցէ՛ք և պիտի բացուի ձեզի»--Մատթ. Է.7:

«Երբ կ՛աղօթէք, ներեցէ՛ք եթէ բան մը ունիք ուրիշին դէմ, որպէսզի ձեր երկնաւոր Հայրն ալ, ներէ ձեզի ձեր յանցանքները: Որովհետեւ եթէ դուք ուրիշին չներէք, ձեր երկնաւոր Հայրն ալ, պիտի չներէ ձեզի ձեր յանցանքները» --Մարկ. ԺԱ.25-26:

4.-Մեզ սիրող Փրկիչը ոչ միայն մեզ կը հրահանգէ աղօթել այլ այլ՝ կը թախանձէ յարատեւօրէն աղօթել, անդադա՛ր աղօթել առանց վհատելու: Եւ ըսաւ.

«Ասաց և առակ մի նոցա առ այն թէ պարտ է յամենայն ժամ կալ նոցա յաղօթս և մի՛ ձանձրանալ»--Ղուկ. ԺԸ.1:

«Ստէ՛պ աղօթեցէք՝ աղօթքի մէջ արթուն մնալով գոհութեամբ:»--Կողոս. Դ.2:

Քրիստոս **աղօթքով** սկսաւ Իր առաքելութիւնը (աշխատանքը), աղօթքով շարունակեց և Գեթսեմանիին ու խաչին վրայ **աղօթքով** վերջացուց աշխարհի վրայ Իր պատուիրակութիւնը:

5.-Աղօթքը այն արարքն ու հոգեյոյզ կեցուածքն է որով մարդ արարած՝ ինքզինք կը յանձնէ իր Արարչի բարի կամքին: Աղօթքի՛ խնդրուածքով, մարդ կը հայցէ Աստուծոյ միջամտութիւնը իր առօրեայ գործունէութեան և իր դժուարալոյծ հարցերուն: Կեանքի ճանապարհը, արդէն իսկ յոգնեցուցիչ և սպառիչ է:

«Քու կա՛մքդ թող ըլլայ երկրի վրայ, ինչպէս որ է երկնքի մէջ»--Մատթ. Զ.10:

Յիսուս ըսաւ անոնց.

«Հոգիս տրտում է մեռնելու աստիճան. այստեղ կեցէք և ինձի հետ հսկեցէք:...Եւ բիչ մը առաջ երթալով՝ ինկաւ երեսի վրայ, աղօթեց ու ըսաւ. Հա՛յր իմ, եթէ կարելի է, այս բաժակը թող անցնի ինձմէ, բայց ոչ ինչպէս ես կ՛ուզեմ, այլ՝ ինչպէս դուն»--Մատթ. ԻՋ. 38-39:

6.-Աղօթքը՝ մուրացկանութիւն դառնալու չէ, այլ սրբազան յարաբերութիւն և հաղորդութիւն Աստուծոյ և մարդու միջեւ: Ի՞նչ պիտի զգայինք և ո՞ւր պիտի դասէինք մեր այն բարեկամը, որ միայն բան մը խնդրելու կամ առնելու ակնկալութեան համար կը հեռաձայնէ կամ կ՛այցելէ մեզ: Բարեկամութիւնը՝ սրտաբացութիւն և զուարթարար խօսակցութիւն ու յարաբերութիւն է: Սրտաբացութիւնը թէեւ զուարթարար խօսակցութիւն է, սակայն կրնայ ըլլալ, նաեւ վշտալի և ցաւակցական արտայայտութիւն:

«Կը խնդրէք և Աստուած չի տար, որովհետեւ չարամտօրէն կը խնդրէք, ձեր հաճոյքներուն ծառայելու համար:
--Յակոբ. Դ. 3:

7.-Աստուած ոչ թէ չի գիտեր կամ չի կրնար գիտնալ մեր ուրախութիւնը կամ ցաւը, այլ՝ Ինք կը փափաքի, որ մե՛նք արտայայտենք Իրեն մեր հոգեկան ուրախութիւնը կամ սրտի կսկիծը: Աղօթքը՝ վերոյիշեալ հոգեկան տրամադրութիւններու խօսակցութիւնն է Ստեղծողին և ստեղծուածին միջեւ: Այլ խօսքով, Աստուծոյ հետ ասուլիս ունենալ է և արտայայտել մեր միտքը: Պէտք չէ մոռնալ, որ ծանցուած աշխարհի մէջ, միայն մարդ արարա՛ծ առանձնաշնորհեալ է արտայայտելու իր միտքն ու խորհուրդները:

«Այսուհետեւ հոգ մի՛ ընէք ու մի՛ ըսէք՝ ի՛նչ պիտի ուտենք կամ ի՛նչ պիտի խմենք կամ ի՛նչ պիտի հագնինք, որովհետեւ այդ բոլորը հեթանոսնե՛րն են որ կը փնտռեն. բանի որ ձեր երկնաւոր Հայրը գիտէ թէ այդ բոլորը պէտք են ձեզի»
--Մատթ. Զ. 31-32, Ղուկ. ԺԲ. 29-30:

«Ձեզմէ ո՞ր հայրն է, որուն որդին եթէ ձուկ ուզէ՝ միթէ ձուկի փոխարէն օ՞ձ կու տայ անոր. և կամ եթէ հաւկիթ ուզէ՝ միթէ կարի՞ճ կու տայ անոր»
--Ղուկ. ԺԱ. 11:

8.-Աղօթքը՝ անիմաստ և անբանաւոր պիտի ըլլար եթէ չպատասխանուէր: Միակ պատճառը, որ աղօթքն ու աղօթելը գոյատեւած են դարեր շարունակ, մարդկային բոլոր խաղաքակրթութիւններու և կրօնքներու մէջ, թէ՛ հեթանոս և թէ Քրիստոնէական, պատճառը աղօթքին պատասխանուի՛լն է:

«Խնդրեցէ՛ք, և պիտի տրուի ձեզի, փնտռեցէ՛ք, և պիտի գտնէք, բաղխեցէ՛ք, և պիտի բացուի ձեզի. Որովհետեւ ով որ խնդրէ՝ կը ստանայ, ով որ փնտռէ՝ կը գտնէ, և ով որ բաղխէ՝ պիտի բացուի անոր»
--Մատթ. Է.7-8, Ղուկ.ԺԱ. 9-10

9.-Ուստի, Ինչո՞ւ համար մեր աղօթքները, ընդհանրապէս, չեն պատասխանուիր, կամ ժխտական կերպով կը պատասխանուին:

Աղօթքի պահուն՝ ենթական պարտաւոր է նախատրամադրել իր իսկական անձնականութիւնը, հրաժարելով իր «ես»էն ու ամ-

բողջապէս նուիրուիլ Աստուծոյ: Երբ **անձնամատոյց** հոգիով աղօթենք Աստուծոյ, յայնժամ մարմնական կաւին մէջ պիտի զգա՛նք աստուածային ներգործութիւնը: Կոտրե՛նք եսասիրութեամբ շղթայուած **իմաւաճ** և անկանոն փափաքները, և հաւատքի հոգեկա՛ն աչքերով նայինք մեր խնդրուածքներուն և աղօթքներուն: Միայն ա՛յն ատեն մեր խնդրուածքները պիտի դառնան աստուածահաճոյ:

Ինչո՞ւ հաւատքի և հոգեկա՛ն աչքերով աղօթել Աստուծոյ, և ոչ «ես»ին կոյր կամ իմաւաճ փափաքներովը:

Վերոյիշեալ սոյն հարցման, Ս.Ղուկաս աւետարանագիր, յստակօրէն թափանցած՝ Յիսուս Քրիստոսի խորհուրդներուն, թարգմանը կը հանդիսանայ ըսելով.

«Երկու մարդիկ տաճարը ելան աղօթելու, մէկը Փարիսեցի, միւսը՝ մաքսաւոր: Փարիսեցին մէկ կողմ կեցած էր և ինքնիրեն այս աղօթքը կ՛ընէր. "Աստուած իմ, գոհութիւն եզի, որ ես նման չեմ ուրիշ մարդոց, ինչպէս յափշտակողները, անիրաւներն ու շնացողները, և կամ ինչպէս այս մաքսաւորը, այլ շաբաթը երկու անգամ պահիք կը բռնեմ և իմ բոլոր ստացուածքներէս տասանորդ կու տամ":

«Իսկ մաքսաւորը մէկ կողմ կեցած էր և չէր իսկ ուզեր իր աչքերը երկինք բարձրացնել, այլ կուրծքը կը ծեծէր ու կ՛ըսէր. "Աստուած, ներէ՛ ինծի՛ մեղաւորիս": Կ՛ըսեմ ձեզի, ասիկա աւելի արդարացած իջաւ իր տունը»--Ղուկ. ԺԸ. 9-14:

Առանց գործածելու հոգեկան հաւատքի աչքը, մարդ անճնասէր է, եսակեդրոն, այլամերժ և իր սեփականը կը դասէ գերիվեր: Այս անձը ներկայացուած է տաճարին մէջ աղօթող Փարիսեցիով: Մաքսաւորը՝ կը ներկայացնէ այդ նախատրամադրեա՛լ հոգեկան հաւատքը, ուր ենթական՝ ապաշխարանքի հաւատք-հոգիով աչքերը **խոնարհեցուցած** է և կուրծքը **ծեծելով** կ՛ըսէ, «Աստուած, ներէ՛ ինծի՝ մեղաւորիս»:

Հաւատքի հոգեկան աչքը՝ աստուածային կայծ ինքնութիւնն է շնորհուած իւրաքանչիւր մարդ արարածին: Զշրջանցենք Աստուծոյ Հոգիին ջունչը և բաժանեալ կամքով կամ եսասիրութեամբ շղթայուած չաղօթենք միայն ի նպաստ մե՛ր յաջողութեան և մեր մտայինին:

Աստուծոյ ստեղծագործ ներգործութիւնը՝ մեր անձնաջանքրքրութիւնը կը վերածէ անձնամատոյց հոգիի: Կանգնի՛նք--միաձուլուելով Անհունին հետ, ու տեսնենք կեանքի իմաստը երկինքի հորիզոնին վրայ և զանազանենք մեր բնածին մտայինները՝ մեր պիտոյքներէն:

> **«Խնդրեցէ՛ք նախ Աստուծոյ թագաւորութիւնը և իր արդարութիւնը, և այդ բոլորը աւելիով պիտի տրուի ձեզի»**--Մատթ. Զ.33, Ի.22:

> **«Եւ ինչ որ խնդրէք իմ անունովս՝ պիտի կատարեմ զայն, որպէսզի Հայրը փառաւորուի Որդիին մէջ»**
> --Յով. ԺԴ.13
> **«Եթէ իմ մէջս մնաք, և իմ խօսքերս ալ մնան ձեր մէջ, ինչ որ ուզէք՝ խնդրեցէ՛ք և պիտի ունենաք»**
> --Յով. ԺԵ.7:

> **«Մինչեւ հիմա իմ անունովս ոչինչ խնդրեցիք. խնդրեցէ՛ք և պիտի ստանաք, որպէսզի ձեր ուրախութիւնը կատարեալ ըլլայ»**
> --Յով. ԺՋ.24:

10.-Աստուած՝ մեր աղօթքներուն **ժխտական և մերժողական** չի պատասխաներ: Աստուած դրակա՛ն պատասխաններ կու տայ մեր աղօթքներուն: Մենք՝ աղօթողնե՛րս՝ Աստուծոյ հաստատական "այո" պատասխանը ժխտական և մերժողական կ՛ենթադրենք կամ կը համարենք:

Կարելի՞ է դաստիարակել զաւակ մը ընդառաջ երթալով անոր բոլո՛ր ըմայքներուն: Միթէ զաւակի մը բոլոր փափաքներուն «այո» չըսելը, զինք չսիրե՞լ է: Երբեմն ժխտական պատասխան մը սիրելիի մը անկեղծ թախանձանքին, աւելի օգտակար է քան թէ դրական պատասխան մը որ զինք կործանումի պիտի տանի:

Պէտք չէ մոռնալ, որ երկու եզրեր կան մարդ արարածին հոգեկան ծովուն մէջ, մէկը՝ **աստուածային,** իսկ միւսը՝ **մարդկային,** որոնք իրենց ինքնատիպ և ուրոյն դիմագիծը կը ջանան դրոշմել մեր վրայ. մէկը բարի իսկ միւսը վնասակար: Ս.Յակոբոս առաքեալ, իր հոգեշունչ տեսանողի վկայութեամբ կը գրէ մեզի,

«Կը խնդրէք և Աստուած չի տար, որովհետեւ չարամտօրէն կը խնդրէք, ձեր հաճոյքներուն ծառայելու համար:
--Յակոբ. Դ. 3:

Մին ներքնագոյն «ես»ն է, իսկ միւսը կեանքի բոլոր ոլորտները թափանցող աստուածապարգեւ հոգիի աչքը:

Սուրբ Հոգին կ՛առաջնորդէ՝ որ ճշգրտօրէն, ճշդութեամբ և ուղիղ հասցէով աղօթենք--Հռոմ. Ը.26:

11.-Աղօթքի պահուն, խիստ կարեւոր է պահել մեր հոգեկան տրամադրութիւնները զուգահեռ Աստուծոյ կամքին: Այլ խօսքով, աղօթքը՝ ըմբռնել և ճանչնա՛լ է Աստուծոյ կամքը, դիտաւորութիւնը: Աղօթքը հաւատքի գաւիթն է ու նախադուռը ուրկէ կարելի կ՛ըլլայ թափանցել աստուածային աննիւթական և հոգեղէն խորհուրդներուն: Հոգեկան ներհայեցողութեամբ և թափանցողութեամբ մարդ կը դառնայ մարգարէ: Պօղոս առաքեալ՝ իր փորձառական տեսութիւնը կը նամակագրէ Կորնթացւոց Եկեղեցիին ըսելով.

**«Ո՞վ կրցաւ երբեք Տիրոջ միտքը կարդալ,
որ կարենայ խորհուրդ տալ անոր»**--Ա. Կոր. Բ.16:

Ի՜նչ աստուածահրաշ հաւատքի ուղեծիր **«մենք ունինք Քրիստոսի մտածումը»:** Վերոյիշեալ համարին մէջ գործածուած "մտածում" բառերը, Յուն. ի մէջ "nooce" բառն է որ կրնան նաեւ թարգմանել "զգացութեան և խորհուրդի": Հաւատացեալները, հաւատքի զինուորեալները ազատագրելով մարդկային միտքը նիւթի կապանքներէն կը միաձուլեն իրենց գիտակցութիւնը աստուածային գիտակցութեան, զգացութեան և խորհուրդին հետ...: Աշխարհիկ հայեացքով, աղօթելը, անդամակցիլ է երկրին բարձրագոյն խորհուրդին: Որպէս խորհրդական տեղեկանալու համար բաղաքական դէպքերու իսկակա՛ն իրագործութիւններուն:

12.-Այս պատճառաւ, մեր Տէրը Յիսուս Քրիստոս գիշերները աղօթքով կ՛անցնէր, ոչ միայն որպէս խնդրանք, օգնութիւն, և աղաչանք Որոնող, այլ որպէս երկնային գերագոյն Խորհուրդի Անդամ: Միջնորդելու համար մարդաշխարհի հարցերը, բարոյական, հոգեկան և մարմնական: Սոյն Համաժողովի խորհրդակցութեան ընթացքին, մեր Տէրը, մոռցաւ նոյնիսկ Ի՛ր մարմնական պահանջը և բառասուն օր չյիշեց ուտել:

13.- Ս. Գրիգոր Լուսաւորիչի անմար հաւատոի աղօթքը 13 երկար տարիներ յետոյ պատասխանուեցաւ: Ս. Գր. Լուսաւորչին հոգեհուր բոցը հաւատի ո՛չ կասեցաւ և ո՛չ ալ շիջեցաւ: Լուսաւորչի և անոր հաւատակիցներու անխախտ հաւատի գոյատեւումը յաղթահարեց չարին բոլոր հնարքները և յաւիտենական փրկարար Արեւալոյսը այգալուսեց Հայաստանեայց Հաւատի լուսապայծառ կառուցումին:

> **«Քիչ, շատ քիչ ժամանակ մը եւս, և ան որ գալու է՝ պիտի գայ և պիտի չուշանայ: Եւ իմ արդարս պիտի ապրի հաւատով»** --Եբր. Ժ.37:

14.- 13 երկա՛ր տարիները լրագրական լուրերու հետաքրքիր կամ մտացածին վէպ մը չէր Գրիգոր Պահլաւունիի բանտարկութիւնը: Խոր Վիրապը՝ դարձաւ այն դարբնոցը ուր լուսաւորիչը յղկուեցաւ, բիւրեղացաւ և սրբացաւ, ներշնչելու և կենսանորոգելու Հայ Ազգը Յիսուս Քրիստոսի հաւատով, որպէսզի ան կարողանայ գոյատեւել յաւերժօրէն: Խորխորատի բանտարկութեան երկարաձգութիւնը ոչ թէ **ժխտակա՛ն** պատասխան մըն էր Աստուծմէ, այլ՝ զգացումի և հաւատոի **նախապատրաստութիւն** մը, որ պատմական դարձակէտ մը պիտի կերտէր, Հայ Ազգի գիտակցութեան և ենթագիտակցութեան մէջ ու պիտի բանդակէր Քրիստոնէական հաւատոի լուսաւոր թեւերուն թռիչքը:

Հայ ազգը ծաւալապաշտական բաղաքականութիւն չհետապընդեց հիմնելու գաղթապետութիւններ, ուր գերեվարէ բնիկ ժողովուրդները, նման կարգ մը Եւրոպական յառաջդիմասէր կարծեցեալ զօրեղ պետութիւններու: Հայ ազգը ծնաւ սուրբեր և ոչ բռնապետեր:

Հայ ազգին երանիէն բողբոջեցաւ Ս. Ներսէսնորհալի՝ որուն "Հաւատով Խոստովանիմ"ի 24 տուները, օրուան իւրաքանչիւր ժամուան համար, աննախընթաց հոգեկան գոհարներ են և պարծանքը Հայ Դպրութեան:

Ս.Գրիգոր Նարեկացին՝ փոխանակ հրամայելու վայրագ ու բիրտ բանակներ, դարձաւ աղօթարարը հաւատացեալներու հոյլին, որոնք դարեր շարունակ, երկիւղածութեամբ ու «ես»էն հրաժարելով և աշտական սիրոյ արցունքներով սորվեցան աղօթել և յարաբերիլ իրենց Տիրոջ Յիսուս Քրիստոսի հետ:

15.-Ումանց համար՝ աղօթքը միայն խնդրանք է (Աստուծմէ բան մը պահանջել), կամ կրօնական արարողութիւն մը (պարտականութիւն մը կատարել), իսկական և գործնական աղօթքը՝ **յարաբերութի՛ւն** է: Փոխադարձ վերաբերմունք, հաղորդակցութիւն և ծանօթութիւն ունենալ իրարու հետ: Քաղաքական տարածութեան մէջ, պետութիւն մը երբ իր յարաբերութիւնը խզէ ուրիշ երկրի մը հետ, կը ծագի թշնամութիւն և կռիւ, փոխանակ բարեկամութեան և սրտակից մտերմութեան:

> **«Կ՛աղօթեմ... բոլոր ինծի հաւատացողներուն համար, որպէսզի ամէնքը մէկ ըլլան, ինչպէս որ դուն, Հա՛յր, իմ մէջս, և ես՝ դու մէջդ, որպէսզի անոնք ալ մեր մէջը ըլլան, և որպէսզի աշխարհը հաւատայ, որ դուն ղրկեցիր զիս: Ես՝ անոնց մէջը ըլլամ և դուն իմ մէջս այնպէս որ անոնք կատարեալ կերպով մէկ ըլլամ»** --Յիսուս, Յով. ԺԷ. 20-21, 23:

16.-Հայ ազգը հպարտ է իր Առաբելակառոյց Եկեղեցիով որ ծննդագործեց ու դիեցուց Նարեկացիներ, Շնորհալիներ, Խորե-

նա ցիներ ու Կոմիտասներ, սակայն ի՞նչ կը կարդան Նարեկացիին «Ի Խորոց Սրտի Խօսք առ Աստուծոյ»ն: Որո՞նք կ՛աղօթեն «Հաւատով Խոստովանիմ» աղօթքները:

«Ոչ թէ ամէն մարդ, որ ինծի "Տէ՛ր, Տէ՛ր" կ՛ըսէ, երկնքի արքայութիւնը պիտի մտնէ, այլ այն, որ կը կատարէ կամքը իմ Հօր, որ երկինքն է: Այն օրը շատեր ինծի պիտի ըսեն. "Տէ՛ր, Տէ՛ր, չէ՞ որ քու անունովդ մարգարէացանք և քու անունովդ դեւեր հանեցինք և քու անունովդ բազում զօրաւոր գործեր ըրինք": Բայց այն ատեն ես անոնց պիտի ըսեմ. "Ես ձեզ երբեք չեմ ճանչցած, հեռացէ՛ք ինձմէ դուք ամէնդ, որ անօրէնութիւն կը գործէք»--Մատթ. է. 21-23:

Յիսուսահիմ Հայ Եկեղեցին, ճարտարապետակա՞ն պարծանք մըն է միայն, թէ Աղօթատուն, ուր Աստուծոյ Հոգին՝ հաւատացեալներ պատրաստող անփոխարինելի դարբնոցն է: Նահատակներո՛ւ երկիր է Հայաստան աշխարհը, սուրբերու աղօթքով թաթաւուած և մարտիրոսներու արեամբ որոգուած:

Գրիգոր Օտեան (1834-87) հրապարակային խոստովանութիւնը, թէ ինք հաւատացեալ մարդ է և օր մը չ՛անցներ առանց աղօթելու:

Հայ Եկեղեցին կը կանչէ բեզ և զիս դարբնելու և կերտելու մեզ ներկայ դարու Նարեկացիներու և Ընորհալիներու:

ա. Աղօթէ՛ ով հայորդի
բ. Աղօթէ՛ սրտալի և հոգեթով բառերովը քու հայրերուդ
գ. Աղօթէ՛ որպէսզի բացուի՛ս Աստուծոյ և լեցուիս Աստուծմով:

Մարդ, աղօթքով պիտի ճգտի Յաւիտենականին, պիտի հասնի Անհասին, տեսնէ Անտեսանելին, ընդգրկէ Անսահմանը և ապրի Յաւիտենականը: Ծատ գեղեցիկ կը ներշնչէ Ընորհալիի, Նարեկացիի, Օգոստինոսի և այլ սուրբերու գրած աղօթքները.

«Լո՛յս,
Արարիչ Լուսոյ,
Առաջին Լոյս
Բնակեալդ ի Լոյս անմատոյց,
Ի ծագել Լուսոյ առաւօտուս
Ծագեա՛ ի հոգիս մեր
Զլոյս քո Իմանալի»

Մի՛ մերժեր բեզի շնորհուած կոչումը:

Յունուար 18, 1991
Թորոնթօ

“ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ”

1.-Ի՞նչ կը նշանակէ **ԱՂՕԹՔ** կամ **ԱՂՕԹԵԼ**:

2.-Մարդ արարածը, պատմութեան սկիզբէն, յայտնուած է որպէս բանաւոր էակ և աղօթող արարած, հոգ չէ թէ ինչի՞ համար կամ որո՞ւ ուղղուած: Չկայ մարդկային հաղաբակրթութիւն կամ մշակոյթ, որբան ալ նախնական ըլլայ ան, որուն մէջ մարդ աղօթած չ՛ըլլայ:

3.-Զաւակ մը իր ծնողքը բնաւ իրենց **անունովը** չի կանչեր, այլ մինչեւ իր մահը այդ բառերը կ՛ըլլան **"հայր** և **մայր**":

4.-Նոյնպէս է նաեւ աղօթող հաւատացեալ մը երբ. **"Հայր մեր որ Երկինքն ես**" կ՛ըսէ, ասիկա կանչ մըն է ուղղուած Աստուծոյ:

5.-Ուրեմն աղօթելու առաջին քայլը լռութեամբ ունկնդրել է լսելու աստուածային ձայնը, որպէսզի մեր աղօթքը չըլլայ մենախօսութիւն, այլ՝ դառնայ տրամախօսութիւն:

Թէեւ մեզի՝Հայ հաւատացեալներուս շատ սովորական կը թուի **Հայր"** կոչել զԱստուած, սակայն Յիսուսի աշակերտները, վստահ եմ, որ առաջին անգամ ապշահար եղան և զգուշութեամբ գործածեցին "Հայր" բառը առ Աստուած:

ՀԱՅՐ “ՄԵՐ”

6.-Հայր բառէն ետք՝ երբ մեր շրթները կ՛արտասանեն "ՄԵՐ" բառը, կարծես աղօթող ենթական այլեւս ինքզինք առանձին և լքուած չի զգար:

7.-Այդ "մեր" բառը ապացոյց մըն է որ "անմատչելիօրէն Հեռաւոր և անհասանելիօրէն Մերձաւոր" Աստուծոյ և Իր ցանկալի մարդ արարածին միջեւ արգելք, ընդդիմութիւն կամ տարբերութիւն չկայ:

ՀԱՅՐ ՄԵՐ ՈՐ ՅԵՐԿԻՆՍ ԵՍ.

8.-Մթնոլորտին մէջ վեր կամ վար չկայ, սակայն, որովհետեւ մարդ երկրայի՛ն արարած է ու իր ոտքերը կառչած են երկրագունտին, իրեն համար երկինքը միշտ **վեր** սեպուած է: Մարդ արարածին յոյսը և ակնկալութիւնը միշտ վերէն, երկինքէն եղած է:

9.-Յիսուս՝ երբ աղօթել կը սորվեցնէ Իր աշակերտներուն, զանոնք կ՛առաջնորդէ որ ճշգրտօրէն, ճշդութեամբ և ուղիղ հասցէով աղօթեն, այսինքն՝ ուղղակի Աստուծոյ:

ՍՈՒՐԲ ԵՂԻՑԻ ԱՆՈՒՆ ՔՈ

10.-Ազգի մը ամենանուիրական առարկան՝ այդ ազգին **ԴՐՕՇԱԿՆ** է:

“Այլ դուք էք մեր թուղթերը՝--նամակները--գրուած մեր սրտերուն մէջ, ճանչցուած ու կարդացուած բոլոր մարդոցմէ: Յայտնի էք որպէս Քրիստոսի թուղթերը՝ սպասաւորուած մեզմէ և գրուած ոչ թէ մելանով, այլ Կենդանի Աստուծոյ Հոգիով, ոչթէ քարեղէն տախտակներու վրայ, այլ սրտի մարմնեղէն տախտակներու վրայ”

--Բ Կոր. Գ. 2.3:

11.-Ուստի, ամէն անգամ որ կրկնենք **"Սուրբ եղիցի անուն Քո"**ն լա՛ւ գիտնալու ենք որ ոչ թէ չա՛րը պիտի արատաւորէ այդ

"Սուրբ Անունը" այլ բոլոր անոնմ որոնմ իրենմ զիրենմ որդեգիր ըրած են և սակայն չեն ուզեր լրացնել որդեգրումի պայմանները:

"Երբ Սուրբ Հոգին իջնէ ձեր վրայ՝ զօրութիւն պիտի առնէք և վկաներ պիտի ըլլաք Ինծի համար" --Գործ. Ա. 8:

12.-Ահաւասիկ ներկայ դարուս կենդանի դրօշակները՝ Յիսուսի վկանե՛րն են:

ԵԿԵՍՑԷ ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆ ՔՈ

13.-"Երկինքի Թագաւորութիւնը", "Աստուծոյ Արքայութիւնը" կամ "Եկեսցէ Արքայութիւն Քո"ն նոյն իմաստն ու նշանակութիւնը կրող խօսքեր են: Վերոյիշեալ ակնարկութիւնները չորս Աւետարաններուն մէջ աւելի քան երեսուն անգամ յիշուած են և կը ցուցաբերեն այս կոչին մեծ կարեւորութիւնն ու կենսական արժէքաւորումը:

14.-Յովհաննէս Մկրտիչ իր բոցավառ բացագանչութիւնը սկսաւ. կ՛ըսէ.

“Ապաշխարեցէ՛ք, որովհետեւ երկինքի արքայութիւնը մօտեցած է”--Մատթ. Գ. 2:

15.-Երբ Յիսուս, անապատի կիզիչ տաքէն ու սատանայի խաբէական ցանցերը և սադրանքները տապալելէն կը վերադառնայ Գալիլիա, Իր առաջին քարոզութիւնը կ՛ըլլայ յար և նման Յովհաննէս Մկրտիչի քարոզութեան.

“Ապաշխարեցէք, որովհետեւ մօտեցած է երկինքի արքայութիւնը” Մատթ. Դ. 17:

16.-Յիսուս՝ Իր աշակերտները դաստիարակելէ ու մարզելէ յետոյ՝ երբ երկու առ երկու կը ղրկէ զանոնք, որ երթան գիւղերն ու քաղաքները քարոզեն ու բժշկութիւններ ընեն, Իր պատուէրը կ՛ըլլայ.

“Երբ երթաք, քարոզեցէ՛ք ու ըսէ՛ք--Երկինքի արքայութիւնը մօտեցած է--հիւանդները բժշկեցէք, բորոտները մաքրեցէք, դեւերը հանեցէք, ձրի առիք, ձրի ալ տուէք”--Մատթ. Ժ.7-8:

17.-Սատանան որպէս լուսեղէն հրեշտակ իր վարմին թելերը լարելով կ՛ըսէ Յիսուսի.

«Այս բոլոր թագաւորութիւնները քեզի պիտի տամ, եթէ գետին իյնալով երկրպագես Ինծի»---Մատթ. Դ.8-9:

18.-Դանիէլ, որ կոչուեցաւ, "Աստուծոյ սիրելին" այսպէս կը բացատրէ Երկնային Թագաւորութիւնը.

“Ու այն թագաւորներուն օրերը Երկինքի Աստուածը Թագաւորութիւն մը պիտի հանէ որ յաւիտեան պիտի չաւերուի, և այս Թագաւորութիւնը ուրիշ ժողովուրդի պիտի չթողուի. անիկա այս բոլոր թագաւորութիւնները պիտի փշրէ ու պիտի հատցնէ, ու ինք յաւիտեան պիտի մնայ”--Դան. Բ. 44:

19.-"Աստուծոյ սիրելի"ն Դանիէլ, իր սրբացած հայեցողութեամբ այլեւս իր հրեայ ազգը **"Աստուծոյ Ընտրեալ ժողովուրդ"** չի ճանչնար, այլ իր տեսանելիութեան մէջ, Աստուծոյ Ընտրեալներ կը կոչուին--**"սուրբերու միաբանութիւն"**-- մը, ինչպէս կը կարդանք.

“Եւ Թագաւորութիւնը Բարձրեալին սուրբերը պիտի առ-

նեն, ու անոնք պիտի ժառանգեն Թագաւորութիւնը ինչեւ յաւիտեան, և յաւիտեանս յաւիտենից ...

"Մինչեւ որ Հինաւուրցը եկաւ, և Բարձրեալին սուրբերուն իրաւունք տրուեցաւ, ու ժամանակը հասաւ որ սուրբերը Թագաւորութիւնը առնեն:

"Բայց ատեանը պիտի բազմի, ու անոր իշխանութիւնը (սատանային) պիտի վերցնեն, զանիկա մինչեւ վերջը բնաջինջ պիտի ընեն ու կորսնցնեն: Եւ Թագաւորութիւնը և Իշխանութիւնը, ու բոլոր երկինքի տակ եղող թագաւորութիւններուն մեծութիւնը Բարձրը եալին սուրբերուն ժողովուրդին պիտի տրուի. Անոր Թագաւորութիւնը յաւիտենական Թագաւորութիւն է, ու բոլոր իշխանները Անոր պիտի ծառայեն ու պիտի հնազանդին"--Դան. Է.18, 22, 26-27:

20.-**ԱՍՏՈՒԾՈՅ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ** տարազը միայն հրէական գրականութեան մէջ չէ որ յիշուած է: "Աստուծոյ Թագաւորութիւն"ը կամ "Երկնային Իշխանութիւն"ը յիշուած է նաեւ Պարսկական Զրադաշտի գրականութիւններուն մէջ: Զրադաշտ շատ մեծ տեղ յատկացուցած է այս նիւթին՝ իր գրութիւններուն մէջ:

Արեւմուտքի մէջ ալ մարդիկ անտես չեն առած **Աստուածային** Թագաւորութեան մը գաղափարը:

Վիրգիլիոս, որ մեռած է Յիսուսի ծնունդէն 19 տարիներ առաջ, շատ գեղեցիկ և յստակ կերպով յօրինած է երեք էջնոց բանաստեղծութիւն մը, որուն մէջ կը խօսի Երկնային Թագաւորութեան մը մասին, ուր պիտի տիրէ արդարութիւն և իրաւունք մինչեւ յաւիտեան՝ աստուածներու Որդիի (Ափոլոյի որդին) իշխանութեամբը երկրիս վրայ:

("The Eclogues, Georgics and Aeneid of Virgil", EclogueIV)

«Պիտի գայ շարանը նոր տարիների,
Նոր մի ծնունդ պիտի իջնի երկնից,
Այն մանկան, որով նախկին երկաթեայ դարը
վերջ պիտի գտնի,
Ու պիտի գայ ոսկեայ դարը համայն աշխարհի»:

21.-Աստուծոյ Թագաւորութիւնը թուական չունի, այլ՝ միայն նշաններ որովհետեւ թիւով չի չափուիր:

«Ձեզի տրուած չէ գիտնալ այն ժամերը և ժամանակները զոր Հայրը հաստատեց Իր իշխանութեան մէջ ... **Վկաներ** պիտի ըլլաք ինծի համար»--Գործ. Ա.6-7:

ԱՆԽԻՂՁ ՊԱՐՏԱՏԷՐ ՇԱՌԱՅԻՆ ԱՌԱԿԸ
Կարդալ--Մատթ. ԺԸ. 23-35

ՁՀԱՑ ՄԵՐ ՀԱՆԱՊԱԶՈՐԴ

22.-Յիսուսի հաւատացողներ իրենց հացը այս աշխարհի իշխանէն չեն ուզեր խնդրել, այլ կը խնդրեն իրենց Երկնաւոր Հօրմէն:

Որովհետեւ եթէ այս աշխարհի իշխանէն խնդրեն, պարտաւոր են կատարել անոր կամքը, որ է՝ ագահութիւն, խաբէութիւն, ոճիր և ստութիւն:

ՏՈՒՐ ՄԵՋ ԱՅՍՕՐ

23.-Տէրունական աղօթքը չ՛ըսեր, "ինծի" այլ կ՛ըսէ՝ "մեզ": Երախաները **մեզ** բառը չեն գիտեր, այլ միայն **ինծի, զիս** կամ **ես** բառերը կը գործածեն:

Այս աղօթքով՝ անձը ի՛ր շահը կը զոհէ ընկերութե՛ան և

հաւաքականութեան շահուն համար: Մինչդեռ հիմա, ըստ այս աշխարհի իշխանին ծրագրին, ագահ անձեր աւելի հարստութիւն կը դիզեն և աւով կը տեւականացնեն իրենց բռնակալական տիրակալութիւնը:

Հաւատացեալի մը աղօթքը **օրուա՛ն** հացին համար է: Ազատ, անկախ և համարձակ ըլլալու միակ պայմանը չամբարելն է: Մարդ ոչ թէ ունեւոր ըլլալու չէ, այլ այդ ունեւորութե՛ն չափազանցուած տենչը, մարմաջը ունենալու չէ: Որովհետեւ, կան ունեւորներ՝ որ բան մը չունեցածի պէս կ՛ապրին, և կան չունեւորներ ալ, որ ունենալու տենչէն չեն կրնար ապրիլ:

ԵԻ ԹՈՂ ՄԵՋ

24.-Յիսուսի գործածած **"թողութիւն"** բառը շատ խորհրդաւոր է: "Թողութիւն" բառն է որ Քրիստոնէութիւնը կը զանազանէ ուրիշ կրօնքներէ: Կարծես թէ Աստուած *մառաղի* պէտք ունի: Մեղքը պարտ էր **փոխարինուիլ**: Իսկ Յիսուս երբ հանդիպեցաւ հիւանդ մեղաւորի մը, ըսաւ անոր.

«Որդեա՛կ, քու մեղքերդ ներուած են քեզի, մահիճդ առ ու քալէ»--Ղուկ. Ե. 18, 24

Այս է Աստուածային սիրոյ կոնդակը, բարի լուրը և ճշմարիտ Աւետարանը, որուն համար Յիսուս երկինքներու բարձրութենէն մինչեւ այս երկիրը եկաւ:

ՁՊԱՐՏԻՍ ՄԵՐ

25.-Մեղաւորի մը կողմէ իր պարտքին **խոստովանութիւնը,** ճանաչումը և խղճահարուիլը ինքնին արդէն մատաղ մը և զոհ մը ընել է:

Իր յանցանքներուն և մեղքերուն ճանաչումին ու խոստովանութեան չափ մեծ զօրութիւն, վերանորոգման ու վերազինման այլ ազդակ չկա՛յ մարդուն համար:

ՈՐՊԷՍ ԵԻ ՄԵՔ ԹՈՂՈՒՄՔ ՄԵՐՈՑ ՊԱՐՏԱՊԱՆԱՑ

26.-Աստուածային սէրը, գթութիւնը և թողութիւն տալը սքանչելի կերպով կը պատկերացնէ մեր Տէրը՝ Յիսուս այս առակին մէջ: Ու նաեւ ակնբախ կերպով կը ցուցաբերուի աններող հոգին, կարգ մը թողութիւն ստացած հաւատացեալներու մէջ:

Աշխարհի ո՞ր օրէնքին առջեւ գթութիւն կայ: Ո՞ր պարտատէրը զիջող հոգի ունի, կամ իր պարտապանին ջնորհ ընել կը մտածէ:

Ի՞նչ կը ներկայացնէ տասը հազար բանբար: Իւրաքանչիւր բանբար 45 ֆիլօ է:

27.-Կը տեսնէ՞ք, թէ մարդկային մեղքը, սխալանքը կամ յանցանքը որքա՛ն անփոխարինելիօրէն մեծ է:

Մարդ երբ այս անել կացութեան ու իր խղճահարումի տուայտանքներուն մէջ կ՛իմանայ Յիսուսի բաղցր ձայնը. «Եկէ՛ք ինծի, բոլոր յոգնածներ և բեռնաւորուածներ, և ես պիտի հանգըստացնեմ ձեզ»:

«Իսկ ծառան դուրս ելլելով՝ գտաւ իր ծառայակիցներէն մէկը, որ հարիւր դահեկան պարտք ունէր իրեն: Եւ կոկորդէն բռնելով զայն՝ կը խեղդէր ու կ՛ըսէր. վճարէ ինծի, ինչ որ պարտք ես: Եւ գնաց ու բանտ նետել տուաւ զայն, մինչեւ որ պարտքըվճարէր»:

Դժբախտաբար, ահաւասիկ ա՛յս է իրական պատկերը շատ մը թողութիւն ստացած հաւատացեալներու վերաբերմունքին իրարու հանդէպ: Նոյն աններող ոգիի ներկայութիւնն է որ կ՛ուրէ ընտա-

նիհները, դրացիները և բարեկամական յարաբերութիւնները: Մենք մոռնալո՛ւ և բանտարկելու ենք մե՛ր ներքին Ես-ը, փոխանակ բանտարկելու մեր պարտապանները:

28.-Իրաւունքն ու սեփականութիւնը կը գերազանցեն սէրն ու բարին: Բոլոր անոնք, որ իրենք զիրենք "Աստուծմէ ըլլալ" կը կարծեն, այս չար--Սատանայի--իշխանութեամբ կառավարուող աշխարհի բարոյականովն ու կանոններովը պէտք չէ շարժին կամ տրամաբանեն: Իրենց տրամաբանութեան վերջակէտը պէտք է ըլլայ սա հարցումը, թէ իրենց ըրածը **բարի՞ է թէ չար,** աստուածահաճո՞յ է, կառուցողակա՞ն է թէ քանդիչ. թէ օրինաւո՞ր է կամ իրաւացի՞: Անձնուրացութեան և զոհաբերութեան ոգին ունեցողն է որ կրնայ ինքզինքը "Աստուծմէ ենք" յայտարարել:

ԵՒ ՄԻ՛ ՏԱՆԻՐ ՁՄԵԶ ՚Ի ՓՈՐՁՈՒԹԻՒՆ

29.-"Մի՛ տանիր զմեզ" բառերը այն տպաւորութիւնը կը թողուն, որ Աստուած Ի՛նք մարդը փորձութեան կը տանի: Այս մտայնութիւնը աւելի կը զօրանայ մեր մէջ երբ կը կարդանք Յիսուսի փորձութեան մասին, որ գրուած է Եբրայեցիս Նամակին մէջ.

> «Քանի որ ունինք Քահանայապետ մը՝ որ մեզի նման փորձուած է ամէն բանի մէջ, բայց առանց մեղքի է»--Դ. 15:

Աստուծոյ Հոգին Յիսուսը ոչ թէ **փորձելու** համար անապատ տարաւ, այլ Իր առաքելութեան ընդհանուր ծրագիրը մշակելու և Իր Հօրը հետ խորհրդածելու համար: "Եւ մի տանիր զմեզ" բառերուն, Աստուածաշունչի յունարէն բնագրի հարուստ լեզուն կու տայ նաեւ այս շատ գեղեցիկ բանաձեւը. "Եւ մի՛ լքեր զմեզ ՚ի փորձութիւն": **Լքել** որ հայերէնի մէջ նաեւ կը նշանակէ՝ **թողուլ, հեռանալ, երեսի վրայ ձգել կամ անօգնական թողուլ,** շատ պատշաճ յարմարութիւն կ՛առնէ Յիսուսի հոգիին և հրահանգ-պատուէրներուն համեմատ «Հեռացուր մեզ փորձութենէ» --J.B.Phillips

«Տէրը ըսաւ. "Սիմո՛ն, Սիմո՛ն, ահա սատանան ուզեց ցորենի նման մաղել ձեզ: Բայց ես աղօթեցի քեզի համար, որպէսզի չպակսի քու հաւատդ"--Ղուկ. ԻԲ. 3:

30.-Հաւատացեալ մը՝ երբ յաւակնոտութիւնն ու հպարտութիւնը կ՛ունենայ և կ՛ուզէ գործել **ինքնիշխան** կերպով, առանց Աստուծոյ օժանդակութիւնը խնդրելու, կրնայ իյնալ փորձութեան մէջ: Ուստի, հաւատացեալ մը՝ որքան ալ ինքզինքը զօրաւոր զգայ, որովհետեւ օտար հողի վրայ կ՛ապրի, իր խնդրանքը ըլլալու է՝ **"Եւ մի՛ լքեր զմեզ ՚ի փորձութիւն".**

ԱՅԼ ՓՐԿԵԱ ՁՄԵԶ ՚Ի ՁԱՐԷ

31.-Չարը մեզի վախ ազդելու չէ, այլ մեզ արթուն և զգուշաւոր դարձնելու է՝ իր բազմատեսակ որոգայթներովը: Ամենէն աւելի զգուշանալու ենք **հպարտութենէ** և **կեղծաւորութենէ:** Երբեք չը-մոռնանք, որ Աստուծոյ հակառակորդը, բանսարկուն և հաւատացեալներու ոսո՛խը Սատանան է.

> **«Կը մռնչէ առիւծի նման, կը շրջի և կը փնտռէ թէ զո՞վ կլլէ»**--Ա Պետ. Ե.8:

32.-Եթէ դիտենք այս հարցը հոգեկան տեսակէտէն, մենք՝ որ մարմնաւոր ենք և հողեղէն, և որուն շնորհուած է վերելք մը նիւթեղէնէն դէպի լուսեղէնը, կ՛աղերսենք որ, ինչպէս որ հասեր

ենք զգացական, բանական և տրամաբանական ըլլալու, հասնինք նաեւ մինչեւ ՆՄԱՆՆ ԸԼԼԱԼՈՒ Յիսուսի՝ մեր Տիրոջ:

«Որովհետեւ զանոնք որ նախապէս կը ճանչնար՝ նախասահմանեց կերպարանակից ըլլալու Իր Որդւոյն պատկերին»--Հռով. Ը. 29:

Հետեւաբար, մեր փրկութիւնը իր լրումը պիտի գտնէ միայն այն ատեն, երբ, այս մարմնեղէն ու հողեղէն իրականութիւնը՝ չարի ճգողական զօրութենէն բոլորովին անջատուած, Բարիի ճգողական զօրութեամբը կամենայ ու դաւանի Բարին, Արդարը և Ճշմարիտը:

ՁԻ ՔՈ Է ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆ

33.-Ի՜նչ մեծ բաջութիւն կը պահանջէ, որ անձ մը՝ կանգնած թշնամի հողին վրայ, իր մայր հայրենիքին բայլերգը երգէ: Վերի փառաբանութիւնը բայլե՛րգն է բոլոր հաւատացեալներուն: Ասիկա կաջառուած և կեղծ փառաբանութիւն մը չէ՛ առ Աստուած: Ասիկա սրտաբուխ ու ճշմարիտ փառաբանութիւն մըն է, բիւրաւոր վկաներու ու գլխատուածներու: Փառաբանութի՛ւնն է, բաջերու, որոնք հակառակ իրենց պարտադրուած տանջանքներուն ու զրկանքներուն, հաւատարիմ մնացած են իրենց արմատին, իրենց Երկնաւոր Հօր և Փրկչին:

Թէեւ, իրենց հայրենի հողերուն վրայ, իրենց անցեալի բարեղէն եկեղեցիներուն աւերակնե՛րը միայն կ՛երեւին, որ թշնամիին հարուածներուն տակ կը շարունակեն դեռ աւերուիլ, փշրուիլ ու բանդըվիլ, բայց իրենց սրտին ու մտքին մէջ հաւատքի իրենց տաճար տակաւին կը մնայ կանգուն, անխորտակելի և յաղթական:

Յաւիտենական Կեանքը՝ այս խումբին է խոստացուած ... :

ՁՕՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՓԱՌՔ ՅԱՒԻՏԵԱՆՍ:

ԱՄԷՆ

Հանդիպա՞ծ էք որեւէ ողբերգութեան: Հիւանդութիւն մը այցելա՞ծ է ձեզի: Կամ մահը մօտեցա՞ծ է ձեզի, երբեւէ: Նայեցէ՛ք Յիսուսի, ունկնդրեցէք միլիոնաւոր վկաներու բացագանչութիւնները և փառաբանութիւնները, ամէն ազգերէ ու ամէն լեզուներէ: Ու միացէք անոնց:

Եթէ ձեր հոգին լեցուած է ուրախութեամբ ու ցնծութեամբ, կրկի՛ն նայեցէք Յիսուսի, որ լուսեղէն Ջուարթութիւն է, ու միացուցէք ձեր ուրախութիւնը անոնց՝ որոնք կ՛երգեհոնեն այս բայլերգը՝ յաղթութեան ու փառաբանութեան

ՔԱՅԼԵՐԳԸ ...:

Դեկտեմբեր 22, 1994
Թորոնթօ

ԱՆԻՄՈՒԱԾ ԹԶԵՆԻՆ

Մատթ. ԻԱ. 18-22

1.-Ինչի՞ կ՛անդրադարձնէ "Անպտուղ Թզենին" մեզ:

2.-Դատաստանական պատժի՞: Աստուածային վրէժխնդրութե՞ն:

3.-Վրէժխնդրութեան սէրը՝ տկարութեան առաջին երեւոյթն է:

4.-Յիսուս Քրիստոսի յայտնաբանած Աստուածը, սիրո՛յ Աստուածն է:

5.-Խաչբարեր՝ մին Նորմանտիի ծովափին որ կը խորհրդանշէ վրէժ, կատաղութիւն ու ոճիր, իսկ միւսը վանքի մը առջեւ, որ կը խորհրդանշէ անձնազոհութիւն, թողութիւն ու սէր:

6.-Թզենիի ծառը ինչպէ՞ս կրնար պտուղ տալ եթէ պտուղի եղանակը չէր:
«Յիսուս երբ մօտեցաւ թզենիին՝ ոչինչ գտաւ, բացի միայն տերեւէ, որովհետեւ տակաւին թուզի ժամանակը չէր»
--Մարկ. ԺԱ.13-14:

7.-Ի՞նչ է խորհուրդը այս առարկայական դէպքին:
Յիսուս ի՞նչ ըսել ուզեց:

8.-Անպտուղ թզենիով Յիսուս Քրիստոս մեզ կ՛անդրադարձնէ "խօսքի՛" զօրութեան:

9.-Մարդկային խօսքը՝ մտքի արտայայտութիւն է: Օրինակ. «Ձեր խօսքը ինձ համար օրէնք է», «Իր խօսքին տէրն է», "Խօսեցեալ" կը նշանակէ նշանուած ըլլալ: Կեսարը խորհրդարանի զեկոյց մը ուղարկեց. «Եկայ, տեսայ, յաղթեցի»:

10.- Մարդկութեան տրուած (աստուածային) խօսելու տաղանդը իր մէջ կը պարունակէ զօրութիւն և կիրարկումի ուժ:

11.- Հին ժամանակուայ բոլոր մոգութիւնն ու կախարդութիւնը խօսքով կը կատարուէին:

12.-Օրհնութիւն և անէծքն ալ խօսքով կ՛իրագործուին:

13.-«Ներէ մեզի մեր պարտքերը, ինչպէս մենք ալ կը ներենք մեր պարտապաններուն»: Մատթ. Զ. 10-15

14.- Նոյնպէս մեր սրտա՛նց ներումը մեր պարտապաններուն, գրաւականն է նաեւ մե՛ր մեղքերու թողութեան:

15.-Ն.Ք. 5-րդ դարուն "խօսք" բառը, Յուն. Լոկոս, Եփեսացի Հերագլիթիսի միջոցաւ իմաստասիրական գործածութեան դրուեցաւ բացատրելու համար տիեզերական սկզբունքը:

16.-Առաբեալներու օրով աստուածային խօսքը ո՛չ թէ Հնգամատեան Օրէնքին մէջն էր, այլ՝ Քրիստոսի Անձի՛ն, Անոր պատգամին մէջ մէջ.

«Այս խօսքը ան ղրկեց Իսրայէլի որդիներուն՝ խաղաղութիւն աւետարանելով Յիսուս Քրիստոսի միջոցով...Յիսուսը որ Նազարէթէն էր՝ Աստուած օծեց Սուրբ Հոգիով և զօրութեամբ, և ան շրջեցաւ բարիք ընելով ու սատանայէն բոլոր բռնուածները բժշկելով, որովհետեւ անոր հետ էր Աստուած»--Գործ. Ժ.36-43:

> «Վերածնաք ոչ թէ ապականացու սերմէ, այլ անապական սերմէ՝ Աստուծոյ կենդանի և մշտնջենական Խօսքով» --Ա. Պետ. Ա.23:

17.-Այսուհետեւ որքա՜ն զգոյշ ըլլալու ենք մեր խօսակցութեան:

18.-Մեր մտածածին հակառակը կը խօսինք ու մեր խօսածին հակառակը կը գործադրենք:

19.-Կենդանի լեզուն, մարդկային ներբին աշխարհի ամենանուրբ թելերուն հետ կը խօսի:

20.-Խորհիլը՝ ցած խօսիլ է, իսկ խօսիլը՝ բարձր խորհիլ է:

21.-Այսուհետեւ եթէ կրնանք, բամբասե՛նք, զրպարտե՛նք ու չարախօսե՛նք...:

22.-Քրիստոսի խօսքերը ծաղրուեցան, Իր դիմագիծը ճաղկուեցաւ, Իր Անունը ուրացուեցաւ, Իր հետեւորդները հալածուեցան, բայց Իր խօսքերը մնացին մշտահունչ և յաւերժաբարբառ:

23.-Աստուծոյ տուած մեծագոյն զօրութիւնը մարդ արարածին՝ խօսի՛լ է:

24.-Յիսուսի իւրաքանչիւր խօսքը և բժշկութիւնը Յարութեան լոյսին առաջնորդող ճանապարհ մըն է.

«Ես իսկ եմ յարութիւն և կեանք. ով որ կը հաւատայ ինծի, թէպէտեւ մեռնի՝ պիտի ապրի. իսկ ով որ կենդանի է և կը հաւատայ ինծի՝ յաւիտեան պիտի չմեռնի:
Կը հաւատա՞ս ասոր»--Յով. ԺԱ. 25-26:

25.-Աստուած տիեզերքը խօսքո՛վ ստեղծեց: Նոյնպէս ալ մարդ կրնայ խօսքով կործանել:

> «Աշխարհները ստեղծուած են Աստուծոյ խօսքով՝ անտեսանելի բաներէն տեսնելի դառնալով»--Եբր. ԺԱ. 3:
>
> «Եւ ասաց Աստուած, Եղիցի լոյս. և եղեւ լոյս»--Ծնն. Ա.3:

Սեպտեմբեր 22, 1994
Թորոնթօ